ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2023 ԹՎԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

2023 թվականին քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների վարչությունը վարչական հսկողության շրջանակներում մարզի 7 համայնքներում մասնակցել է քաղաքաշինության, հողաշինության, տրանսպորտի և կապի բնագավառներում համայնքների ղեկավարների գործունեության ուսումնասիրության աշխատանքներին:

Հայտնաբերված ինքնակամ շինարարության դեպքերի վերաբերյալ համայնքների ղեկավարներին առաջարկվել է օրենքով սահմանված կարգով վերացնել թերությունները:

Հաշվառվել են համայնքների ղեկավարների կողմից մարզպետի աշխատակազմ իրազեկված թվով 1642 շինարարության թույլտվություններ, 287 ավարտական ակտեր, 11 շինության քանդման թույտվություններ և անհրաժեշտության դեպքում կատարվել են ուսումնասիրություններ:

Ուսումնասիրվել են մարզի համայնքներում սուբվենցիոն ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Պետական բյուջեի ներգրավմամբ ընթացող շինարարությունների ժամանակ պարբերաբար կատարվել են այցելություններ, մշտադիտարկումներ և քննարկումներ՝ ուղղված շինարարության որակի բարձրացմանը և դրանց ժամկետներում կատարման ապահովմանը:

Վարչությունը մասնակցել է պետական, համայնքային և հանրակրթական դպրոցների բյուջեների միջոցներով իրականացված շինարարական օբյեկտը ընդունող հանձնաժողովի աշխատանքներին:

Վերահսկողություն է իրականացրել համայնքներում ինքնակամ շինարարությունների հայտնաբերման և կանխարգելման ուղղությամբ՝ առաջարկելով համայնքների ղեկավարներին իրենց լիազորությունների շրջանակներում չթույլատրել իրականացնել ինքնակամ շինարարություններ, իսկ արդեն կատարված ինքնակամ շինարարությունների վերաբերյալ ձեռնարկել գործուն քայլեր՝ քանդման կամ օրինականացման ուղղություններով:

Վերահսկողություն է իրականացվել ՀՏԶՀ-ի պատվիրատվությամբ մարզում առաջնային լուծում պահանջվող խնդիրներին՝ ուղղված շինարարական ծրագրերի ընթացքին:

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է պահվել հատկապես միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների հարակից տարածքում առկա ինքնակամ շինությունների օրինականացման հարցը:

Ավարտվել են ՀՀ Կոտայքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ քննարկումները: Համայնքներից ստացված բոլոր առաջարկները, որոնք սահմանված կարգով ներկայացվել են նախագծող կազմակերպություններին, հաշվի են առնվել և ներառվել են նշված նախագծերում:

Վարչությունը համագործակցել է մարզի համայնքների և համապատասխան կազմակերությունների՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի, «ՀԵՑ» ՓԲԸ-ի հետ՝ մարզի տարածքում առկա խնդիրների լուծման ուղղությամբ:

Վերահսկողություն է իրականացվել համայնքների վարչական տարածքներում խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման և էլեկտրական էներգիայի մատակարարման համակարգերի սանիտարական պահպանման և անվտանգության գոտիների պահպանման ուղղությամբ՝ առաջարկելով համայնքների ղեկավարներին ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ արգելելու վերոնշյալ գոտիներում իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից կատարվող հողազավթումները և ինքնակամ շինարարությունները:

Համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարտադիր վճարների և այլ վճարների կատարման նպատակով բացվող բանկային հաշվի

վարման կարգը սահմանելու մասին» N 2078-Ն որոշման՝ վարչությունը համագործակցել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հետ՝ ներկայացնելով համապատասխան տեղեկատվություն մարզում առկա բազմաբնակարան շենքերի և դրանց մասով 2023 թվականի հունվարի 25-ի և 2023 թվականի հուլիսի 12-ի դրությամբ բացված բանկային հաշիվների վերաբերյալ:

Կազմակերպվել են մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ձմեռային պահպանման աշխատանքները:

Վարչության կողմից սահմանված կարգով կազմվել և կադաստրի կոմիտե է ներկայացվել 2023 թվականի մարզի հողային հաշվեկշիռը, համաձայն որի, մարզի ընդհանուր տարածքը կազմում է 207 582,9 հա, որից 153762,5 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր են, 15802,7 հա բնակավայրերի, 3626,3 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 1476,1 հա էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների, 8647,6 հա՝ հատուկ պահպանվող տարածքների, 581,1 հա՝ հատուկ նշանակության, 22801,8 հա անտառային և 884,9 հա ջրային ֆոնդի հողատարածքներ են:

Սահմանված ժամկետներում ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն է ներկայացվել 2023 թվականի ՀՀ Կոտայքի մարզի ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման սահմանված կարգով կազմված աղյուսակ-հաշվետվությունը:

Մարզի համայնքներում հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով իրավական և մասնագիտական վերահսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմում վարչության կողմից ընթացիկ ստուգումներ են իրականացվել մարզի Արզնի և Չարենցավան համայնքներում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի ընթացքում առողջապահական հաստատությունների կողմից իրականացված վճարովի ծառայությունները և այլ մուտքերը կազմել են 892 մլն 144 հազար դրամ (2022 թվական՝ 790 մլն 648 հազար դրամ), որն ավել է 101 մլն 496 հազար դրամով ավել (աճը շուրջ 12,8 %) :

Կոտայքի մարզի ծննդօգնության ծառայություններ իրականացնող բուժհաստատություններում 2023 թվականի ընթացքում գրանցվել է 1904 ծնունդ, որից 40-ը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կանանցից:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված բաշխացուցակների համաձայն, հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ջերմուկի «Արարատ» մոր և մանկան առողջարան» ՓԲԸ-ում պետության կողմից երաշխավորված առողջարանային-վերականգնողական բուժում են ստացել 27 երեխա, 26 խնամակալների ուղեկցությամբ (2022 թվականին՝ 28 երեխա, 26 խնամակալ):

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի փետրվարի 21-ի N457-Ա հրամանը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի մարտի 26-ի 74-Ա որոշումը՝ մարզի պոլիկլինիկական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առողջապահական ընկերություններում ձևավորվել են մշտական գործող ուղեգրող հանձնաժողովներ, որոնց կողմից 2023 թվականի ընթացքում սոցիալական որևէ կարգավիճակ չունեցող քաղաքացիներին տրամադրվել են 23 ուղեգրեր (2022 թվականին՝ 14 ուղեգիր)՝ պետական պատվերի շրջանակներում համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով:

2023 թվականի ընթացքում ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում իրականացվել են լայնածավալ աշխատանքներ՝ նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով հագեցած աշխտորոշիչ բաժանմունք ստեղծելու նպատակով:

«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամը «Մանկական ակնաբուժական ծառայությունների ամրապնդումը Հայաստանի հինգ մարզերում» ծրագրի շրջանակներում մարզի 5 դպրոցների շուրջ 2328 աշակերտների շրջանում իրականացրել է ակնային ստուգումներ, խնդիրներ ունեցողները ուղեգրվել են բազմապրոֆիլ առողջապահական հատատություններ:

2023 թվականի հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 8-ը ներառյալ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի տարածքում գտնվող միջճամբարային մեկուսարանը ապահովել է 3200 երեխաների առաջնային բժշկական օգնությունն ու սպասարկումը՝ «Հրազդանի բժշկական

կենտրոն» ՓԲԸ-ի համապատասխան բժիշկ մասնագետների միջոցով: Միաժամանակ, մեկուսարանին տրամադրվել է նաև անհրաժեշտ դեղորայք և բժշկական պարագաներ:

Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության կողմից հաշվետու տարում հաշվառվել են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ:

ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի թիվ 751-Ն որոշման, հավելված 3-ի, 17-րդ կետի համաձայն 1 մասնագիտացված (2 հատուկ կարիքներով երեխա), 8 ընդհանուր տիպի խնամատար ընտանիքում խնամվող (կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 14 երեխա) երեխաների խնամքի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով կատարվել են տունայցեր: Այս պահին ունենք 9 խնամատար ընտանիք, որտեղ խնամվում են 16 երեխաներ:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետի աշխատակազմի կողմից տրված եզրակացությունների հիման վրա բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություն է տեղավորվել 2 երեխա, նույն հաստատություններից կենսաբանական ընտանիք է վերադարձվել 1 երեխա:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն, մարզի համայնքներում 2023 թվականի ընթացքում կայացվել է ավագանու 1772, համայնքի ղեկավարի՝ 23926 որոշում:

2023 թվականի հոկտեմբերի 18-20-ը իրականացվել է համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների վերապատրաստում: Վերապատրաստվող խումբը կազմված է եղել 25 մասնակցից:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի N 345-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի համաձայն մարզի 2 համայնքներում իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություններ (Զարենցավան, Արզնի)՝ համայնքների ղեկավարների և ավագանիների 2021-2023 թվականների գործունեության նկատմամբ:

Իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացվել է արտակարգ իրավիճակների, առևտրի և ծառայությունների, կրթության, մշակույթի, պաշտպանության,

ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներում:

Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները հրապարակվել են մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում:

Վերը նշված 2 համայնքներում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության շրջանակներում մեթոդական և խորհրդատվական աջակցության նպատակով, տեղական ինքնակառավարման մարմինների հսկողական գործառույթ իրականացնող մասնագետների մասնակցությամբ իրականացվել են շուրջ 18 առևտրի ու հանրային սննդի և 9 կենցաղային ծառայությունների օբյեկտների համատեղ հսկողություններ: Արդյունքները դարձել են քննարկման առարկա և համայնքների ղեկավարներին ներկայացվել են համապատասխան առաջարկություններ և պարզաբանումներ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակներում:

2023 թվականին համայնքներում իրականացվել է առևտրի և ծառայությունների ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների իրականացման հսկողություն: Համայնքների ղեկավարների կողմից մարզպետարան ներկայացված եռամսյակային հաշվետվություններն ամփոփվել են և կիսամյակի կտրվածքով ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

2023 թվականին համայնքների ղեկավարների և ավագանու անդամների մոտ ընդունելություններին դիմած քաղաքացիների թիվը կազմել է՝ 8278, համայնքների ավագանու անդամների մոտ՝ 182:

2023 թվականի ընթացքում կազմակերպվել և անցկացվել է մարզային զորակոչային հանձնաժողովի 5 նիստ, որտեղ քննարկվել են 2022 թվականի ձմեռային և 2023 թվականի ամառային զորակոչերի ընթացքի, արդյունքների ամփոփման և շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2022 թվականի ձմեռային և 2023 թվականի ամառային զորակոչերից ազատման ենթակա և տարկետման իրավունքից օգտվելու վերաբերյալ հարցերը:

Հաշվետու ժամանակահատվածում Կոտայքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնում ստացվել է 89903 զանգ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 80393), զանգերի թիվն ավելացել է 9510-ով կամ 12%-ով:

Ստացված զանգերից 2058-ը եղել են դեպք-պատահարների վերաբերյալ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 2678), այսինքն նախորդ տարվա համեմատությամբ դեպքերը նվազել են 620-ով կամ 23%-ով:

2023 թվականին համայնքներում կազմվել և ճշգրտվել են համայնքների քաղաքացիական պաշտպանության պլանները, ստեղծվել են քաղաքացիական պաշտպանության ծառայություններ, մշակվել են ծառայությունների կանոնադրությունները, որոնք համաձայնեցվել են Կոտայքի մարզային փրկարարական վարչության հետ: Համաձայնեցման փուլում են Կոտայքի մարզի քաղաքացիական պաշտպանության, տարահանման և ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության պլանները:

ՀՀ Կոտայքի մարզպետի հաստատմանն է ներկայացվել «ՀՀ Կոտայքի մարզի տարածքում 2023 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը» և ամենամսյա համայնքներից ճշգրտվում են կատարված աշխատանքներ:

Համաձայն «ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի հունվարի 17-ի ՈԳՍ//900-2022 գրության՝ երկամսյա պարբերականությամբ ներկայացվել է տեղեկատվություն մարզի բոլոր համայնքների համացանցային կայքերի մշտադիտարկման վերաբերյալ:

Մարզի համայնքների կողմից հաշվառված 2020 թվականին Արցախում սանձազերծված պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետությունից տեղահանված ընտանիքի/անձի տվյալները մուտքագրվել է Արցախից տեղահանված անձանց հաշվառման տեղեկատվական համակարգ, իսկ մուտքագրված թերթիկների թղթային տարբերակներն առաքվել է միգրացիոն ծառայություն:

Մարզի համայնքների կողմից հաշվառված 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքի/անձի հաշվառման թերթիկների տվյալները մուտքագրվել է ԼՂ-ից

տեղահանված անձանց հաշվառման տեղեկատվական համակարգ, այնուհետև կատարվել է հասցեների փոփոխություն, ինչպես նաև վարչությունը մասնակցել և կազմակերպել է տեղահանված ընտանիքների կացարանով ապահովման գործընթացին:

Ուսումնասիրվել, քննարկվել և պատրաստվել է մարզի բնակիչների 32 դիմում-բողոքների, 36 այլ բնույթի դիմումների պատասխաններ, ինչպես նաև պատրաստվել է համայնքներին ուղղված բազմաթիվ շրջաբերականներ և պատասխաններ՝ տարբեր բնույթներ կրող բազմաթիվ գրությունների (ՀՈԱԿ-ների, ՀՈԱԿ-ների տնօրենների մրցույթի կարգի, թեստերի, թափուր պաշտոնների, համայնքների ղեկավարների տեղակալների, գույքի արտոնությունների, շենք-շինություններ, նախադպրոցական ուսումնական հաստատությունների, էլեկտրոնային շտեմարանների վարման, իրավական ակտերի նախագծերի, մրցույթների և ատեստավորումների հետ կապված, համայնքային ծառայողների վերապատրաստման, հեռավար վերապատրաստման և բազմաթիվ այլ հանձնարարականների և գրությունների), ինչպես նաև պատրաստվել է նախարարություններին և համայնքներին ուղղված բազմաթիվ գրություններ:

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Մարզում գործում են մարզպետի աշխատակազմի ենթակայության 89 հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ 58-ը միջնակարգ, 31-ը՝ հիմնական, ԿԳՄՍ նախարարության ենթակայության 11 հանրակրթական ուսումնական հաստատություններ, 10 ավագ դպրոց, 1 կրթահամալիր /Աբովյանի կրթահամալիր /, 6 պետական քոլեջ, 5 արհեստագործական ուսումնարան, 1 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն /Հրազդանի հումանիտար ինստիտուտ/:

2023-2024 ուսումնական տարում ուսումնական հաստատությունների 1628 դասարաններում սովորում են 39208 աշակերտներ, առաջին դասարան են հաճախել 3938 աշակերտներ:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ներառական կրթություն են ստանում 483 աշակերտներ: Մարզի 58 նախադպրոցական հաստատություններից գործում են 56-ը, 28 մանկապարտեզներ հիմնովին վերանորոգված են:

Մարզպետի աշխատակազմի և «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ համագործակցությամբ ինժեներական կրթությունը հասանելի դարձնելու նպատակով մարզի 27 դպրոցներ հագեցած են «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներով:

Այս տարի մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում ևս կիրականացվի պարտադիր ատեստավորում: «Սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման համակարգի ներդրման փորձնական ծրագրով» ատեստավորվել են շուրջ 377 ուսուցիչներ: Մարզային 89 ուսումնական հաստատություններից 88-ում իրականացվել է «Դպրոցական սնունդ» ներդրումային ծրագիրը ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի «Պարենի համաշխարհային ծրագրի» համագործակցությամբ: Այս ծրագրի արդյունքում մարզի 70 դպրոցների ճաշարաններ վերանորոգվել և կահավորվել են, շուրջ 16465 տարրական դասարանների աշակերտները և նախակրթարանի սաներն ապահովված են ամենօրյա տաք և չոր սննդով, իսկ ծնողները ներգրավված են որպես ներդրողներ:

Հրազդանի N2 և Աբովյանի N2 հիմնական դպրոցների շենքերի կառուցման աշխատանքներն ընթացքի մեջ են:

ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի և ԿՄՍ վարչության նախաձեռնությամբ հունվարի 28-ին ընդառաջ Նոր Գեղիի արվեստի դպրոցում կայացել է «Հայրենիքի գույներով» խորագիրը կրող գեղանկարչության մարզային երիտասարդական ցուցահանդես-փառատոն՝ նվիրված Հայոց բանակի կազմավորման 31- ամյակին

ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի մշակութային միջոցառումների տարեկան ծրագրի շրջանակներում Կոտայքի մարզի Գառնի համայնքում կայացել է «Վարդավառ» ամենամյա փառատոնը:

Հուլիսի 19-ին և 20-ին ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության նախաձեռնությամբ Նաիրի համայնքի Քասախի արվեստի դպրոցում տեղի է ունեցել Հրաչյա Ղափլանյանի 100-ամյակին նվիրված Կոտայքի մարզային թատերական մրցույթ-փառատոնը:

Օգոստոս ամսին Եվրոպական ժառանգության պահպանման օրերի և ՅՈՒՆԵՍԿՕ- ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման» կոնվենցիայի ընդունման 20-ամյակի շրջանակներում Կոտայքի մարզի մի շարք համայնքներում իրականացվել են «Կենսունակ ժառանգություն» խորագիրը բազմապիսի միջոցառումներ:

ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի մշակութային միջոցառումների տարեկան ծրագրի շրջանակներում դեկտեմբերի 8-ին կայացել է բանաստեղծ, Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանին նվիրված «Ինչպե՛ս եմ քեզ սիրում, երկիր» խորագրով ասմունքի մանկապատանեկան մարզային մրցույթ-փառատոնը:

2023 թվականի ընթացքում Կոտայքի մարզում սպորտի մասսայականացման, դպրոցականների կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորման , հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակման նպատակով անցկացվել է բազում սպորտային միջոցառումներ: Փետրվար-մարտ ամիսներին անցկացվել է «7-12-րդ դասարանների աշակերտների միջև սպարտակիադա» մարզական միջոցառման համայնքային և մարզային փուլերը: «Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող «Սպորտլանդիա»» մարզական միջոցառման համայնքային և մարզային փուլերը անցկացվել է մարտ-ապրիլ ամիսներին:

Նոյեմբերի 13-ից մարզում մեկնարկել է «ՀՀ Կոտայքի մարզպետի գավաթ» վոլեյբոլի մարզային ավանդական առաջնությունը, որին մասնակցել են շուրջ 70 դպրոցների աշակերտներ:

Կոտայքի մարզը պատշաճ մասնակցություն է ապահովել նաև Հայաստանի Հանրապետության «Ազգային ժողովի գավաթ»-ի մարզային փուլին և Համահայկական 8-րդ ամառային խաղերին:

Արզնիի Խաչիկ Ասմարյանի անվան վոլեյբոլի ակադեմիայում անցկացվել է աղջիկների և տղաների Լողափնյա վոլեյբոլի առաջնություն:

2023 թվականին կազմակերպված «ՀՀ Վարչապետի գավաթ» բոլոր մարզաձևերին մարզն ունեցել է ակտիվ մասնակցություն և զբաղեցրել մրցանակային տեղեր:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ

2023 թվականի պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու նպատակով ՀՀ Կոտայքի մարզի 10 համայնքների կողմից ներկայացվել է համայնքների սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 36 ծրագրի հայտ՝ ընդհանուր 11.5 մլրդ. դրամ արժեքով, որից՝ 6.6 մլրդ. դրամը նախատեսվել է ներդնել համայնքների

բյուջեների, 4.9 մլրդ. դրամը պետական բյուջեի և 28.5 մլն. դրամն այլ կազմակերպությունների միջոցներից:

2023 թվականի ներկայացված ծրագրերը հաստատվել են ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

Այդ ծրագրերով մարզի համայնքներում կառուցվում և նորոգվում են փողոցներ, խմելու ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման համակարգեր, հասարակական շենքեր, վերանորոգվում և կառուցվում են մանկապարտեզներ, գազաֆիկացվում են բնակավայրեր, անցկացվում է լուսավորության համակարգ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Մարզում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 155236.5 հա, որից՝ վարելահողը 37419.2 հա է: Մշակվում է վարելահողերի շուրջ 50%-ը: Մշակվում են հացահատիկային, հատիկաընդեղենային, կարտոֆիլ, բանջարեղենային մշակաբույսեր, ինչպես նաև տեխնիկական բարձրարժեք մշակաբույսեր: Հատկապես վերջին տարիներին ավելացել է կտավատի,ոսպի և ոլոռի ցանքատարածքները: 2023 թվականին մարզում 9248 հա տարածության վրա կատարվել է հացահատիկային մշակաբույսերի ցանք, 166 հա հատիկաընդեղեն, 804 հա բանջարանոցային մշակաբույսեր,տեխնիկական մշակաբույսեր՝ 65 հա , կարտոֆիլ՝ 631 հա, բազմամյա խոտերի ընթացիք տարվա ցանք՝ 76 հա: Ընդամենը ցանքային տարածքը կազմում է 12042 հա:

Մարզում դրական տեղաշարժերից առանձնապես կարևորվում է փակ գրունտի բանջարեղենի և հատապտղի տարածքների ավելացումը: Ջերմոցային տնտեսությունները զբաղեցնում են 143 հա տարածք, որից բանջարեղենի արտադրությամբ- 81 հա, ելակի արտադրությամբ՝ 24 հա, ծաղկի արտադրությամբ՝ 38 հա: Ընթացքի մեջ են նոր ջերմատնային տնտեսությունների կառուցման աշխատանքները:Մարզում առկա է 4535 հա պտղատու այգի(ներառյալ տնամերձ), որից 905 հա ինտենսիվ այգի, իսկ նորագույն տեխնոլոգիաներով՝ 556 հա, 155 հա հակակարկտային ցանցով և 420 հա կաթիլային ոռոգմամբ: Գյուղատնտեսությամբ զբաղվող մարզի տնտեսվարողներին աշնանացան ցորենի ցանք կատարելու համար 2023 թվականի բերքի տակ կատարված 2666 հա ցանքից ՀՀ կառավարության կողմից տրված աջակցության ծրագրի շրջանակներում օգտվել են մարզի 1194 շահառուներ:

Մարզում անասնաբուծության ճյուղում իրականացվող աշխատանքներից կարևորվում է խոշոր և մանր եղջերավոր կենդանիների համարակալման աշխատանքները: 2023 թվականին համարակալվել է 41405 գլուխ:

Մարզի ջրային ավազանը հիմնականում ընդգրկում է Հրազդան, Մարմարիկ, Դալար, Ծաղկաձոր, Մեղրաձոր գետերը և Մարմարիկի ջրամբարը՝ 24 մլն.խ.մ. ծավալով: Ըստ գույքագրման տվյալների, մարզում առկա են 440 բնաղբյուրներ, որոնց մեծ մասը քաղցրահամ ջրեր են և դրանք շշալցելու դեպքում համաշխարհային շուկա դուրս գալու մեծ հնարավորություններ են ընձեռնում: Առկա են հանքային ջրերի երեք խոշոր հանքավայրեր՝ Բջնի, Արզնի և Հանքավան. որոնցից միայն Բջնիի հանքավայրից է շշալցում իրականացվում, իսկ Արզնի և Հանքավան հանքային ջրերը օգտագործվում են բուժական նպատակներով՝ որպես թերմալ տաք ջրեր: Առավել մտահոգիչ է հատկապես լեռնային գոտիներում խմելու ջրի կապտաժների անմխիթար վիճակը, ինչպես նաև քլորակայանների բացակայությունը:

Մարզը հարուստ է օգտակար հանածոների պաշարներով, առկա են ոսկու, ալյումինի, պղինձ-մոլիբդենի, նեֆելինային սիենիտների, բազալտի, լիտոիդային պեմզայի, մարմարի, գրանիտի, հրաբխային խարամի հաստատված պաշարներով հանքավայրեր:

Մարզի անտառային տարածքները կազմում են 24625 հա, որոնք ունեն հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև աչքի են ընկնում բուսական տեսակների և հատապտուղների բազմազանությամբ: Մարզի անտառները լուրջ բարեփոխումների կարիք ունեն: Առավել կարևորվում է թափոնների կառավարման ոլորտը՝ նկատի ունենալով նաև մարզում զբոսաշրջության հնարավորությունները և հանգստի գոտիների առկայությունը: Համայնքներում աղբահեռացման և սանիտարական մաքրման աշխատանքները մշտապես գտնվել է մարզպետի աշխատակազմի ուշադրության կենտրոնում, որի արդյունքում շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ տարվող աշխատանքները բավականին ակտիվացել են և էականորեն նվազել են չսահմանված տեղերում և վայրերում ապօրինի աղբաթափման երևույթները:

ՋՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ինչպես նաև այլ գերատեսչություններ են ներկայացվել ոլորտը կարգավորող իրավական ակտերի

վերաբերյալ առաջարկություններ: Զուգահեռ կատարվել են նաև պլանների ճշգրտման աշխատանքներ:

ՀՀ կառավարության որոշումներով հայտարարված վարժական հավաքներին աջակցելու նպատակով բաժինը համագործակցել է ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Իր լիազորությունների շրջանակներում բաժինը մասնակցել է 2023 թվականին անցկացված հրամանատարաշտաբային ուսումնավարժանքներին և պարապմունքներին:

Համաձայն ՀՀ կառավարության 08.11.2018թ. № 1269-Ն որոշման, ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանում է ներկայացվել ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմում աշխատող պահեստազորայինների և զորակոչային տարիքի պարտադիր զինվորական ծառայություն չանցած անձանց տվյալները:

Սահմանված կարգով իրականացվել են բաժնի փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Մարզպետի աշխատակազմի պահպանման համար 2023 թվականին ՀՀ պետական բյուջեով նախատեսվել էր 608 միլիոն 186 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 595 միլիոն 559 հազար դրամը, կամ 97.92%-ը, իսկ տնտեսված գումարը՝ 12 միլիոն 627 հազար դրամի չափով գոյացել է էներգետիկ և կապի ծառայությունների, գործուղման և կառավարչական ծախսերի հոդվածներով տնտեսումից:

Մարզպետի աշխատակազմի կարողությունների զարգացում ծրագրով նախատեսված 4 միլիոն դրամից աշխատակազմի աշխատանքն ավելի արդյունավետ կազմակերպելու համար ծախսվել է 3 միլիոն 786 հազար դրամ՝ համակարգչային տեխնիկա և գրասենյակային կահույք ձեռք բերելու նպատակով: Չծախսված 214.0 հազար դրամը կազմակերպված գնումների գործընթացում գոյացած տնտեսման արդյունք է:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզպետի կողմից ընդունվել են 476 որոշումներ, իսկ գլխավոր քարտուղարի կողմից՝ 695 հրամաններ:

ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի 2023 թվականի հաստիքացուցակում առկա են 100 հաստիքներ (պաշտոններ), որից 4-ը վարչական պաշտոններ են, 7-ը՝ հայեցողական պաշտոններ, 77-ը քաղաքացիական ծառայության պաշտոններ, 7-ը՝ քաղաքացիական աշխատանք կատարողի պաշտոն և 5-ը՝ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններ: Պաշտոնի են նշանակվել 6 անձ, որից 1-ը՝ հայեցողական, 5-ը քաղաքացիական աշխատանք կատարողի պաշտոններում: Պաշտոնից ազատվել են 4 անձ, որից 1-ը՝ հայեցողական, 3-ը քաղաքացիական աշխատանք կատարողի պաշտոններից:

ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում առկա են քաղաքացիական ծառայության 77 պաշտոններ, որից 16-ը թափուր են: Կայացել է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար 19 մրցույթ, որից 7-ը՝ արտաքին և 12-ը՝ ներքին: Պաշտոնների են նշանակվել 18 քաղաքացիական ծառայողներ: 2 քաղաքացիական ծառայողի պաշտոնավարման ժամկետը երկարաձգվել է մեկ տարի ժամկետով: Պաշտոններից ազատվել են 18 քաղաքացիական ծառայողներ՝ 15-ը անձնական դիմումի համաձայն, 3-ը քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու՝ օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալու հիմքով (66 տարեկան): Վերապատրաստվել են 28 քաղաքացիական ծառայողներ:

ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործում են 7 առողջապահական բաժնետիրական ընկերություններ և 26 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպություններ: Թափուր են 4 առողջապահական բաժնետիրական ընկերությունների և 19 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների պաշտոններ: Կայացել է 6 առողջապահական բաժնետիրական ընկերությունների տնօրենի թափուր պաշտոնի մրցույթ: Նշանակվել է 6 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն: Պաշտոններից ազատվել են 29 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն:

ՀՀ Կոտայքի մարզում գործում են 92 պետական ոչ առևտրային կազմակերպություններ, որից՝ 1 մշակույթի կենտրոն, 2 մարզադպրոց, 58 միջնակարգ դպրոցներ և 31 հիմնական դպրոցներ: Թափուր է 7 պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոն:

Նշանակվել են 6 պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններ: Ազատվել են 9 պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեններ, որից 1-ը անձնական դիմումի համաձայն, 8-ը՝ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հիմքով: Հայտարարվել է 32 մրցույթ, որից 22 պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի, 10-ը պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի: Կարգապահական պատասխանատվության են ենթարկվել 7 տնօրեններ՝ որից 5 նկատողություն, 2 խիստ նկատողություն կարգապահական տույժի:

2023 թվականին ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմում մուտքագրվել է 22 614 գրություն, որից 1616-ը քաղաքացիներից ստացված դիմումներ են եղել: 2023 թվականին ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմից ելքագրվել է 8880 գրություն:

2023 թվականի ընթացքում կատարվել է ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի կողմից իրականացվող նախաձեռնությունների, աշխատանքային խորհրդակցությունների, մարզպետի, մարզպետի տեղեկալների, մարզպետի աշխատակազմի պաշտոնատար անձանց հանդիպումների, քննարկումների, աշխատանքային այցելությունների, ինչպես նաև մարզի համայնքներում տեղի ունեցած իրադարձությունների, միջոցառումների լուսաբանման աշխատանքներ (շուրջ 900 թողարկում):

2023 թվականի ընթացքում կազմակերպվել է զանգվածային լրատվության ներկայացուցիչների հետ ՀՀ Կոտայքի մարզպետի հարցազրույցներն ու հանդիպումները:

Վարչությունն ապահովվել է օրենսդրությամբ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակումը տարին առնվազն մեկ անգամ:

ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում պարբերաբար տեղադրվել են մարզպետի, ինչպես նաև համայնքների ղեկավարների և ավագանու որոշումները:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից ստուգանշվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 476 որոշումներ, գլխավոր քարտուղարի 695 հրամաններ: Մարզպետի ընդունած որոշումները <Տարածքային կառավարման մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն ներկայացվել է ՀՀ տարածքային

կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ իրավաչափության ուսումնասիրման համար, որոնց վերաբերյալ որևէ դիտողություն չի արձանագրվել:

Մարզի տարածքում Կառավարության տարածքային քաղաքականության իրագործման հիմնական բնագավառներին / ֆինանսներ, քաղաքաշինություն, տրանսպորտ և ճանապարհաշինություն, գյուղատնտեսություն և հողօգտագործում, կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն, մշակույթ, սպորտ և երիտասարդություն, շրջակա միջավայրի պահպանություն, պաշտպանություն, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանություն, տնտեսության զարգացում/ առնչվող մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումներին տրամադրվել է իրավական աջակցություն 476 որոշումների մշակման վերաբերյալ:

Բաժնի կողմից ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխությունների նախագծեր, որոնց վերաբերյալ անհրաժեշտության դեպքում ներկայացվել են առաջարկություններ:

Ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի 11 համայնքների ավագանիների շուրջ 1735 որոշումներ, համայնքներիի ղեկավարների 22663 որոշումներ, արձանագրված թերությունների վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ՝ գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու վերաբերյալ:

Բաժնի կողմից «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 26-րդ հոդվածի համաձայն իրականացվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի որոշումների, գլխավոր քարտուղարի հրամանների հաշվառման մատյանների վարման աշխատանքները:

Բաժնի կողմից սահմանված կարգով վարվում են /ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 18-ի N 1505-Ն որոշում/ մարզպետի աշխատակազմում ստորագրված պայմանագրերի հաշվառման մատյանները: